ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 67

«03» հունիսի 2021 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՊՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՏԱՆԻՍԼԱՎ ՀՐԱՉԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-052-0022-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.14 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրեսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ քաղաքացի Ստանիսլավ Հրաչի Քոչարյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրվել է նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող 08-052-0022-0009 կադաստրային ծածկագրով 0.14 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողամասում /վկայական՝ N 23072013-08-0008/ գյուղատնտեսական արտադրական նշանակության անասնաշենք կառուցելու համար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում Կապս բնակավայրում գտնվող, քաղաքացի Ստանիսլավ Հրաչի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող 08-052-0022-0009 կադաստրային ծածկագրով 0.14 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23072013-08-0008) նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատիգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն՝ այդ հողամասում քաղաքացու կողմից գյուղատնտեսական արտադրական նշանակության անասնաշենք կառուցելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին.

1) Պարտավորեցնել կառուցապատողին՝ կառուցապատման գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

2) Հողամասի նպատակային նշանակության սույն որոշմամբ կատարված փոփոխությունը արտացոլել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի 2021 թվականի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշմամբ նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխությամբ պայմանավորված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝			
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝			
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝			
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝			
Կ. ՂԱՆԴԻԼՅԱՆ՝			
Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԴՐՄԵՅԱՆ

/ՓՈԽԱՐԻՆՈՂ/

«03» հունիսի 2021 թվական
գյուղ Մայիսյան